

ԲՈՒՆՈՒՅՅԱՆ ԹԱԹՈՒԼ

Ինչ անուշ է աստղը լալիս
Այս գիշեր,
Սեր են ուզում,
Խունկ է թափվում երկնքից,

Արտ են ուզում,
Հարդ է թափվում երկնքից,
Ու դառնում է Կաթնձիռը
Ճանապարհ:

Ինչ մոտիկ է աստղը լալիս
Այս գիշեր,
Լույս են ուզում,
Մութ է կախվում երկնքից,

Հովիվն ուր է,
Աստղերն եղան ցիրուցան
Ու կապեցին իմ կորստին
Ծիածան:

ՔԱՐԵ ՄԱՏՅԱՆ

Ախ, իմ քարեր, իմ քարափներ,
Իմ ծննդյան արթուն դարեր,
Իմ տունուտեղ, իմ տան պատեր,
Իմ շուրթերի անուշ բառեր:
Պիտի տանեմ ձեզ դեպի վեր,
Հանց արևի փայլուն նվեր,
Իմ տոն օրվա, իմ նոր օրվա,
Գալիք օրվա հիշատակներ:
Աստղն ահա՝ ելնում է նա,
Պիտի ցոլա ու բարձրանա,
Իմ հին օրվա,
Իմ հուն օրվա,
Եփված օրվա գագաթն է նա:
Ախ, իմ քարեր, քայլող քարեր,
Իմ թափառող կապույտ քարեր,
Իմ խոր օրվա, իմ նոր օրվա,
Գալիք օրվա հիշատակներ: